



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK 16, N.Y.

MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 6056
Ապրիլ 3, 1963

Հոգեշնորհ
Տ. Ժիրայր Արղ. Թաշճեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Միական Խորհուրդի
Թորանթօ.

Սիրելի Հայր Ժիրայր,

Ստացած ենք 1963 Մար 30 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 1-ին գումարուած
Տարեկան Միական Ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի
ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը
խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական Ժողովը տեղի ունեցած է
Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն եւ ընտրու-
թիւնը կատարուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալ-
ները՝ իբրեւ անդամ Միական Խորհուրդին:

- Տիարք՝ Արթօ Արզուեան
- Վահէ Ունճեան
- Ջաւէն Մեսրոպեան
- Սեդրակ Ատուրեան
- Տիգրան Ունճեան
- Յակոբ Թորոսեան մէկ տարուան համար
- Յարութիւն Արթինեան մէկ տարուան համար

Դիտել կու տանք թէ 11 հոգիէ բաղկացեալ Ձեր Միական Խորհուր-
դի հինգ կամ վեց անդամներուն տեղ մասնակի ընտրութիւն կատարելու
իրաւունք միայն ունիք: Երբ եօթը հոգիի ընտրութիւն կատարած էք,
առանց բացատրութիւն տալու, վերջին երկուքի պաշտօնավարութեան
շրջանը պէտք է տեւէ միայն մէկ տարի:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք ձեզի
յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան շրջան մը, ի պայծառութիւն
Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ
ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի